

Բ Ա Ն Ա Վ Ե Ճ Д И С К У С С И И

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԻ ՀՈՂՈՎԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բաճասիր. գիտ. դոկտոր Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հոլովը քերականական այնպիսի կարգ (կատեգորիա) է, որ բազմազան թելերով շաղկապվում է լեզվի քերականական կառուցվածքի, նրա ձևաբանական, շարահյուսական շատ իրողությունների հետ և չէր կարող կարևոր տեղ չբռնել անվանի հայագետ Մանուկ Արեղյանի լեզվաբանական-քերականական աշխատություններում:

Գիտական ասպարեզ իջնելով XIX դարի վերջերին՝ իր ծավալած բազմաբեղուն գործունեության ընթացքում Մ. Արեղյանը զբաղվել է նաև արևելահայ աշխարհաբարի կամ արևելահայ գրական լեզվի ուսումնասիրությամբ և մի շարք արժեքավոր հետազոտություններով հիրավի «նոր էջեր բացել հայ լեզվաբանական մտքի պատմության մեջ»¹:

Լինելով հայագիտության հիշարժան երախտավոր Ստ. Պալասանյանի անմիջական հաջորդը և շարունակելով առաջ տանել արևելահայ աշխարհաբարի ուսումնասիրությունը՝ Արեղյանը չի գնացել տրոբված ճանապարհով և ամեն անգամ աշխատել է նորովի, ավելի խոր ու ճշտորեն ներկայացնել նրա քերականական համակարգը՝ իր բազմազան կողմերով ու դրսևորումներով: Հայտնի է, որ նա նոր ու յուրովի մոտեցում է ցուցաբերել արևելահայ աշխարհաբարի կամ արևելահայ գրական լեզվի նաև հոլովների նկատմամբ՝ ստեղծելով մի տեսություն, որ, սակայն, համընդհանուր ընդունելություն չի գտել, տարբեր կերպ է ըմբռնվել և տարատեսակ գնահատության արժանացել: Ուստի՝ առ այսօր տեսական ու գործնական կարևորություն է ներկայացնում այն, թե Մ. Արեղյանը՝

ա) ինչպե՞ս է ըմբռնել ու լուսաբանել հոլովի քերականական կարգը:
բ) Ի՞նչն է համարել հոլովների որոշման հիմունքը:
գ) Ի՞նչ հիմունքով քանի՞ հոլով է ընդունել արևելահայ աշխարհաբարում:

դ) Հոլովների մասին միշտ նույն տեսակետն է ունեցել, թե՞ ժամանակի ընթացքում դա ինչ-որ չափով վերանայել է ու զարգացրել:

ե) Ստեղծել է արդյոք հոլովական այնպիսի տեսություն, որ բացարձակապես անթերի է և կիրառելի նույնությամբ:

զ) Ինչպե՞ս է ընդունել իր հոլովական տեսության քննադատությունները և պատասխանել դրանց:

Սրանք հարցեր են, որոնց պատասխանը տալիս են ամենից առաջ հենց Մ. Արեղյանի այն աշխատությունները, որոնցում հայոց լեզվի հոլովներն են քննության առնվել ու լուսաբանվել:

Ժամանակագրորեն այդ աշխատություններ են՝ «Աշխարհաբարի քերականություն. դասագիրք ստորին դասարանների համար» (Վաղարշապատ, 1906), «Գրաբարի համառոտ քերականություն» (Վաղարշապատ, 1907, 2-րդ տպագր. վերամշակված, Երևան, 1936), «Տարրական քերականություն» (Թիֆլիս, 1907, 2-րդ տպագր. մշակած, բարեփոխած, Թիֆլիս, 1908, 3-րդ տպագր. մշակած և ընդարձակած, Թիֆլիս, 1910 և այլն), «Աշխարհաբարի հոլովները» (էջմիածին, 1908), «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (էջմիա-

1 Մ. Արեղյան. Հայոց լեզվի տեսություն. Երևան, 1965, էջ V:

ծին, 1909), «Աշխարհաբարի շարահյուսություն» (Վաղարշապատ, 1912), «Հայոց լեզվի տեսություն» (Երևան, 1931), «Մի քանի քերականական խնդիրների մասին. Պատասխան իր տեսությունը քննադատողներին» (գրված՝ 1936-ին, լույս է տեսել 1985-ին՝ «Երկեր»-ի Ը հատորում):

Դրանց բնույթից ու նպատակագրումից ելնելով՝ Մ. Աբեղյանը, ճիշտ է, նույն գիտական մակարդակով ու խորությամբ չի ներկայացրել ու լուսաբանել հոլովները, բայց բոլոր դեպքերում հետևողականորեն այն տեսակետն է հայտնել և աշխատել հիմնավորել ու ապացուցել, որ արևելահայ աշխարհաբարում կամ արևելահայ գրական լեզվում նախ, ինչպես ընդունված է, ոչ թե յոթը, այլ հինգն են, որ հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում սեռականը՝ տրականին, հայցականը ուղղականին կամ տրականին է նույնացվել և այդ հիմամբ դուրս մղվել հայերենի հոլովական համակարգից:

Սա Մ. Աբեղյանի հոլովական տեսության առանցքը կազմող հիմնական նորույթն էր, որով նա կտրականապես հակադրվում էր աշխարհաբարի նախորդ քերականների (Խ. Աբովյան, Ատ. Պալասյան, Ա. Բահաթրյան, Ն. Տեր-Ղեոնդյան, Ն. Մելիք-Թանգյան..., այլև՝ Մ. Սեբաստացի, Ա. Այսրեյան...) սկզբունքներին ու տեսակետներին՝ բազմիցս նշելով ու շեշտելով, թե «Աշխարհաբարի հոլովները հինգ են՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներդրական»², «Մենք մեր «Աշխարհաբարի քերականություն» մեջ հինգ հոլով ենք դրած՝ ուղղական, տրական, բացառական, գործիական, ներդրական: Իսկ «Տարրական քերականություն» մեջ բացի վերոհիշյալներից և սեռական, ճիշտ համարում ենք առաջինը (ընդգծումն իմն է—Ա. Մ.), այսինքն հինգ հոլով առանց հայցականի և սեռականի»³, «Մեր լեզուն ունի մեր աշխարհաբարում հինգ հոլովական ձևեր. 1. ուղղական, 2. երկրորդ հոլով (նշում), 3. բացառական, 4. գործիական, 5. ներդրական»⁴, «Հոլովները կամ անվան ձևերը հինգ են, որ կոչվում են՝ ուղղական, տրական, բացառական, գործիական, ներդրական»⁵, «Արևելյան աշխարհաբարը ձևականորեն (ընդգծումն իմն է—Ա. Մ.) միայն հինգ հոլով է զանազանում՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներդրական»⁶ և այլն:

Այսպիսով՝ քերականագիտության կողմից ընդունված ընդհանուր տեսակետին հակառակ Մ. Աբեղյանը արևելահայ աշխարհաբարում կամ արևելահայ գրական լեզվում յոթի փոխարեն հինգ հոլով է ընդունում, պարզ է, ելնելով բացառական գոյական անվան համառոտարակ հոլովվող բառի զուտ արտաքին ձևից:

Եվ իրո՞ք. նա, առանց վարանելու, դա համարել է հոլովների որոշման հիմնական հիմունքը և, ի հաստատումն յոթի փոխարեն հինգ հոլովի գոյություն, այն տեսակետը հայտնել ու բազմիցս մատնանշել, թե «մի գոյական հոլովել նշանակում է ասել այն բոլոր ձևերը, որ կարող է ունենալ գոյականը»⁷, «Հոլով ասվում են գոյականի այն ձևերը, որոնք ցույց են տալիս, թե գոյականը խոսքի մեջ ինչպիսի լրացում է դառնում մի ուրիշ բառի, կամ իբրև խնդիր ինչպիսի կախում ունի յուր խնդրառու բառից»⁸, «Հոլովները հինգ են, այսինքն ամեն անուն կարող է փոխվել հինգ ձևով...»⁹, «Ի՞նչ է հոլով ասածը,—եթե ոչ հոլովելի բառերի զանազան ձևեր (Form), որ կազմվում են մեծ մասամբ հոլովական վերջավորություններով»¹⁰, «Ձևաբանության մեջ

2 Մ. Արևելյան. Աշխարհաբարի քերականություն. Վաղարշապատ, 1906, էջ 136:

3 Մ. Արևելյան. Աշխարհաբարի հոլովները («Երկեր», հատ. 2. Երևան, 1974, էջ 570):

4 Նույն տեղում, էջ 601:

5 Մ. Արևելյան. Տարրական քերականություն. Թիֆլիս, 1910, էջ 40:

6 Մ. Արևելյան. Հայոց լեզվի տեսություն. Երևան, 1965, էջ 399:

7 Մ. Արևելյան. Աշխարհաբարի քերականություն. էջ 134:

8 Նույն տեղում, էջ 135—136:

9 Մ. Արևելյան. Աշխարհաբարի հոլովները («Երկեր», հատ. 2, էջ 571—572):

10 Նույն տեղում, էջ 571:

միայն ձևի հետ պիտի գործ ունենա աշակերտը և ձևերը կրկնելիս գործ չպիտի ունենա այդ ձևերի կիրառության հետ»¹¹, «Հոլովը ձևի վրա է հիմնված. չկա առանձին ձև, չկա և առանձին հոլով»¹², «Մեր աշխարհաբար լեզուն ըստ ձևի (formell) միայն հինգ հոլով է զանազանում, ուստի ձևաբանության մեջ (formenlehre) միայն հինգ հոլով պիտի դնել»¹³, «Մի անուն հոլովել նշանակում է ասել այն բոլոր ձևերը, որ կարող է ստանալ անունը՝ խոսքի (իմա՝ նախադասության—Ա. Մ.) մեջ զանազան հարաբերություններ արտահայտելու համար»¹⁴, «Մեր արդի գրական լեզուն, ըստ ձևի և բովանդակության հակադիր միասնության ֆորմուլի», ունի անունների հինգ հոլովական ձև...»¹⁵ և այլն:

Հոլովական ձևը երբեք էլ իմաստազուրկ կամ աննշանակ չհամարելով՝ Մ. Արեղյանը, սակայն, ինչպես վերոհիշյալ՝ միտումնաբար բերված բազմաշատ ուղղակի խոսքերն են ցույց տալիս, այն տեսակետն է դավանում, թե ձևաբանության մեջ կամ լեզվի ձևաբանական իրողությունների նկարագրության ժամանակ (այլ արտահայտությամբ՝ լեզվի արտահայտության պլանում) պետք է վերանալ հոլովի իմաստից, նշանակությունից, կիրառությունից և այն որոշել զուտ անվան արտաքին՝ փոփոխված ձևով:

Բայց հենց այս տեսակետից էլ եթե շատ հեշտորեն են տարրորոշվում և որևէ դժվարություն չեն հարուցում բացառականը, գործիականը և ներգոյականը՝ միայն իրենց հատուկ՝ -ից||-ուց (օրինակ՝ ֆաղափից, ֆռչից, եղբորից, օրվանից, ուրախությունից, որոշումից..., գինուց, մարդուց, կարգալուց, սիրուց...), -ով|| (ամբ (օրինակ՝ ֆաղափով, ֆռչով, եղբորով, ուրախությունով || ուրախությամբ, որոշումով || որոշմամբ, գինով, մարդով, կարգալով, սիրով), -ում (օրինակ՝ ֆաղափում, օրում, պետությունում...) վերջավորությունների շնորհիվ, ապա մյուս հոլովները՝ ուղղականը, սեռականը, տրականը և հայցականը, չունենալով նման պարզ ու տարրորոշիչ ձևավորում՝ ոչ միայն բովանդակության, այլև արտահայտության պլանում են բավական բարդ պատկեր ներկայացնում:

Եվ իսկապես. եթե նախադասությունից կամ խոսքից դուրս ևս պարզ ու հասկանալի են բացառականը, գործիականը և ներգոյականը՝ իրենց ընդհանուր իմաստներով, ապա բոլորովին պարզ ու հասկանալի չէ, թե ի՞նչ են նշանակում ուղղական, սեռական, տրական և հայցական հոլովներն՝ ինքնին վերցրած, հիմա, օրինակ, «Մի գիրք ընկավ գրադարակից» և «Մի գիրք վերցրի գրադարակից», «Աշակերտի գիրքը նոր է» և «Նա մոտեցավ մի աշակերտի», «Ուսուցիչը գտնում է մի աշակերտի», «Ընկերս նվեր տվեց իր բարեկամին» և «Ընկերս շատ է սիրում իր բարեկամին»:

Պետք է ասել, որ այդ անորոշությունը, բառաձևերի նույնությունը կամ ավելի ճիշտ՝ նմանությունն են հիմք ծառայել Մ. Արեղյանի համար ծանրանալու առավելապես հայցական և սեռական հոլովների վրա և հանգեցու այն եզրակացության, թե դրանք ժամանակի ընթացքում այլ հոլովների (ուղղականի, տրականի) հետ ձուլվելով՝ դուրս են մղվել գործածությունից:

Մերժելով հայցականը՝ նա, օրինակ, ուղղակի ասում է. «Մենք չունինք հայցականի համար առանձին ձև, չունինք ուրեմն և գրաբարի հայցական հոլովը: Դրա պաշտոնը որոշ դեպքերում ուղղականն է յուր վրա առել, որոշ դեպքերում տրականը»¹⁶, «Պատմականորեն մեռել է մեր հայցական հոլովը,

11 Մ. Արեղյան. Աշխարհաբարի հոլովները («Երկեր», հատ. 2, էջ 572):

12 Նույն տեղում, էջ 578:

13 Նույն տեղում, էջ 638:

14 Մ. Արեղյան. Տարրական քերականություն, էջ 40:

15 Մ. Արեղյան. Մի քանի քերականական խնդիրների մասին («Երկեր», հատ. 2, Երևան, 1985, էջ 582):

16 Մ. Արեղյան. Աշխարհաբարի հոլովները («Երկեր», հատ. 2, էջ 578):

ներառեցի անցել են ուղղականն ու տրականը»¹⁷, «Մեր լեզուն հին հայցականի արտահայտած հարաբերությունները մտցրել է (") ուղղականի արտահայտած հարաբերությունների խմբի մեջ, մասամբ և տրականի...»¹⁸, «Ուղղականի ձևը, ընդհանրական, հետզհետե գործածվում է իբրև հայցական, մինչև որ վերջապես այդ ձևն է իշխող դառնում: Հետևանքն այն է լինում, որ հին հայցական հոլովն ըստ ձևի դուրս է ընկնում, և մնում է միայն ուղղական հոլովը, բայց ընդարձակած կիրառությամբ...»¹⁹ և այլն:

Մ. Արեղյանը նույն կերպ մերժում է և սեռական հոլովը՝ ասելով. «Եթե մեր լեզվի մեջ սեռական և տրական հոլովները մի ընդհանուր ձև ունին, ապա այդ երկուսը մի ընդհանուր հոլով են և ոչ թե երկու տարբեր հոլովներ»²⁰, «Հայերենում... իրար հետ նույնացել են «նաև» սեռական և տրական հոլովները»²¹, «...սեռական և տրական հոլովների ձևական տարբերությունը, որ գեոկա հին լեզվի մեջ որոշ թվով բառերի համար», աշխարհագրորդ բուրդովին վերացել է, և առաջ է եկել մի ընդհանուր հոլով՝ սեռական-տրական»²², «Աշխարհագրորդի հոլովները» ուսումնասիրության մեջ (եր. 18—83) ես մանրամասն հետազոտելով սեռական և տրական հոլովների զարգացումը, ցույց եմ տվել, որ մեր լեզվի մեջ հին լեզվի այդ երկու հոլովները կատարելապես (") նույնացել են իրար և կազմում են մի ընդհանուր «սեռական-տրական» հոլով»²³. «Ես ասում եմ դարձյալ, որ հին սեռական և տրական հոլովները մեր նոր լեզվի մեջ միացել, դարձել են մեկ ընդհանուր «սեռական-տրական» հոլով»²⁴, «Օբյեկտիվ իրականությունն այժմ այն է, որ մեր լեզվի հին սեռական և տրական հոլովներն այժմ մեկ ընդհանուր միացյալ «սեռական-տրական» են, մեկ հոլով, հին երկու հոլովների ֆունկցիաներով»²⁵ և այլն:

Նվ աչապես՝ գտնելով, որ հոլովական ձևերի նմանությամբ կամ նմանեցմամբ հայցականը և սեռականը մեռել ու գոյություն չունեն աշխարհագրորդում, Մ. Արեղյանը դա բացատրում է հայոց լեզվի պատմական զարգացմամբ և համարում օրինաչափորեն առաջ եկած իրողություն:

Հետագային թողնելով այն, թե նման բացատրությունը որքանով է ճիշտ և համապատասխանում է իրականությանը, թե՞ ոչ, պետք է ասել, որ Արեղյանը որևէ տարբերություն չի տեսնում ձևով իրար նման հոլովաձևերի միջև և դրանք ոչ թե տարբեր, այլ նույն քերականական կամ բառային ձևվերն է համարում և ըստ այդմ մերժում հայցականի ու սեռականի, իբրև ինքնուրույն ու անկախ հոլովների, գոյությունը արևելահայ աշխարհագրորդում:

Նկատելի է, սակայն, որ իր այդ տեսակետը հաստատած լինելու համար նա հայցականի դեպքում եթե հարցը հեշտորեն է լուծում, ապա սեռականի դեպքում որոշակի խոչընդոտի կամ դժվարության է հանդիպում այն պարզ պատճառով, որ, ի տարբերություն գոյականների և դրանց հարաբերակից այլ դերանունների (սով, առ, ի՞նչ, բայժը, ամենքը, ոչինչ և այլն) սեռականի և տրականի, անձնական դերանունների սեռական ու տրական հոլովները իրենց ձևով խստորեն կամ արմատապես տարբերվում են իրարից, հմմտ. նա—իմ—իեն, մենք—մեր—մեզ, դու—քու—քեզ, ինք—նախ—նախ, նա—նրա—նրան:

17 Մ. Արեղյան. Հայցական հոլովը մեր աշխարհագրորդում. էջմիածին, 1909, էջ 80:

18 Նույն տեղում:

19 Մ. Արեղյան. Հայոց լեզվի տեսություն, էջ 336:

20 Մ. Արեղյան. Աշխարհագրորդի հոլովները (սերկեր, հատ. 2, էջ 598—599):

21 Մ. Արեղյան. Հայոց լեզվի տեսություն, էջ 335:

22 Նույն տեղում, էջ 340:

23 Մ. Արեղյան. Մի քանի քերականական խնդիրների մասին (սերկեր, հատ. 2, էջ 565):

24 Նույն տեղում, էջ 582:

25 Նույն տեղում:

Բայց որքան էլ զարմանալի թվա, Մ. Աբեղյանը դա ևս սեռականի և տրականի, իբրև առանձին ու անկախ հոլովների, գոյության փաստ չի դիտում և որպեսզի հավաստի, որ հայոց լեզվի պատմական դարգացման ընթացքում իրոք հայցականի և ուղղականի, սեռականի և տրականի, տրականի և հայցականի նույնացում է տեղի ունեցել, որ բոլոր դեպքերում հայցականն ու սեռականը մեռել և գոյություն չունեն արևելահայ աշխարհագրում, դերանունների՝ տրականից տարբերվող սեռականի ձևերը նաեւ թե սեռականի ձևեր, այլ գերազանցապես ստացական դերանուններ կամ ածականներ է համարում և հոլովական հարացույցում ներկայացնում իբրև տրականի ձևեր՝ հետևյալ, րստ էություն ինքնահակասող, բացատրությունը. «Դերանունների տրական հոլովի համար պիտի նկատի ունենալ, որ առաջին ձևը (ընդգծումն իմն է—Ա. Մ.)՝ իմ, քո (ժողովրդ. բու), մեր, ձեր, իր կամ յուր (ժողովրդ. իրա), սրա, դրա, նրա (այլև գրաբար՝ ո՞յր, փոխ. ո՞ւմ) գործ են ածվում իբրև սեռական, այսինքն՝ իբրև անվան խնդիր. ինչպես՝ իմ գիրքը, քո գիրքը, յուր գիրքը, ձեր գիրքը, նրա գիրքը, սրա գիրքը, դրա գիրքը։ Իսկ մյուս ձևերը (այս ընդգծումն ևս իմն է—Ա. Մ.)՝ ինձ, քեզ և այլն, լինում են խնդիր բայի կամ ածականի, ինչպես՝ ինձ մոտեցավ, քեզ հասավ. նրան ծանոթ է»²⁶, «Սեռական և տրական հոլովների նույնացման մեջ անձնական դերանունների նկատմամբ լեզուն բացառություն չի արել (ընդգծումն իմն է—Ա. Մ.)։ Աշխարհագրի իմ, քո, իր, մեր, ձեր ձևերը մնում են մեր հին լեզվից իբրև ստացական ածական և ոչ իբրև անձնական դերանվան սեռական»²⁷ և այլն։ Այսպես՝ մերժելով սեռականի, իբրև ինքնուրույն ու անկախ հոլովի, գոյությունը նաև անձնական դերանունների դեպքում և գտնելով, որ ինչպես հայցականի, այնպես էլ նրա վերացման գործընթացում հայոց լեզուն «ոչ մի բացառություն չի թողել», Մ. Աբեղյանը միանգամայն ճիշտ ու տեղին էր համարում իր իսկ առաջադրած հինգ հոլովի տեսակետը...

Հոլովը որոշելով անվան կամ հոլովվող բառի արտաքին՝ փոփոխված ձևով, որ իրոք շորսից (ինչպես՝ հայր-հոր-հորից-հորով, զուռ-զուռն-զոռնից-զոռով, Գրիգորենց-Գրիգորենց-Գրիգորենցից-Գրիգորենցով..., ո՞վ-ո՞ւմ-ո՞ւմից-ո՞ւմով, ոչ ոք-ոչ ոքի-ոչ ոքից-ոչ ոքով) կամ հինգից (ինչպես՝ սառ-սարի-սարից-սարով-սարում, գինի-գինու-գինուց-գինով-գինում, քույր-քույրից-քույրով-քույրում, օր-օրի-օրվանից-օրից-օրով-օրում, ի՞նչ-ինչի-ինչից-ինչով-ինչում և այլն) չի անցնում, նա, անշուշտ, չէր սխալվում, որ այդ նկատի առնելով կամ այդ հիմամբ հայերենում յոթի փոխարեն հինգ հոլով էր ընդունում։

Պետք է, սակայն, ասել, որ հոլովը սոսկ անվան արտաքին՝ փոփոխված ձևով որոշելու հիմունքը, որով առաջնորդվում էր Մ. Աբեղյանը՝ անվիճելիորեն հետևելով երիտքերականական լեզվաբանական ուղղությանը²⁸, իբրև ձևական հիմունք, չէր կարող տալ և չէ էլ տալիս հայոց լեզվի հոլովների և նրանց համակարգի իրական ու ճիշտ պատկերը։

Առանց տարակուսելու կարելի է ասել, որ դա զգացել է ինքը՝ Մ. Աբեղյանը՝ հայտնելով նաև այն տեսակետը, թե հոլովները ոչ միայն ձևականորեն կամ սոսկ րստ ձևի, այլև րստ նշանակությամբ պետք է որոշել կամ զանազանել իրարից։ Այսպես՝ 1912 թ. «Աշխարհագրի շարահյուսություն» մեջ նա գրում է. «Արևելյան աշխարհագրը ձևականորեն միայն հինգ հոլով է զանազանում՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական. բայց րստ նշանակությամբ առանձին հոլով պետք է համարել նաև կոչական,

²⁶ Մ. Աբեղյան. Աշխարհագրի քերականություն, էջ 160։

²⁷ Ի. Աբեղյան. Աշխարհագրի հոլովները (Երևան, հատ. 2, էջ 593)։

²⁸ Այդ մասին տե՛ս, օրինակ, Գր. Ղափանցյան. Լեզվաբանություն. Երևան, 1939, էջ 186. Է. Աբեղյան. Հայ լեզվաբանություն պատմություն, հատ. 2, Երևան, 1962, էջ 144—145. Ա. Ղափանցյան. Հայ մանկավարժական լեզվաբանություն, Երևան, 1969, էջ 127—130, 152 և այլն։

հայցական և սեռական հոլովները (ընդգծումն իմն է—Ա. Մ.)²⁹, Ծվ կամ՝ «Բայց ըստ նշանակության առանձին հոլով պետք է համարել կոչական, հայցական և սեռական հոլովները (ընդգծումն իմն է—Ա. Մ.), թեպետ և կոչականը ձևով չի տարբերվում ուղղականից, սեռականը՝ տրականից, իսկ հայցականն՝ ուղղականից և տրականից»³⁰:

Հայոց լեզվի հոլովները ձևականորենից զատ, ըստ նշանակության որոշելու կամ զանազանելու հիմունքը կազմում է Մ. Աբեղյանի հոլովական տեսության մի այլ և, անշուշտ, շատ կարևոր նորույթը, որով նա տարբեր հոլովների բնույթը, փոխադարձ կապն ու հարաբերությունը, բուն էությունն է բացահայտել և լեզվաբանական գիտության նվաճումներից ելնելով՝ միանգամայն իրավացիորեն նշել, որ լինում են կամ կան երկու տեսակ՝ անկախ և կախյալ հոլովներ: Այսպես՝ համապատասխան զրան Մ. Աբեղյանը գտնում է, որ «Ուղղականն ու կոչականն իրենց բնավորությամբ կազմում են մի կարգի հոլովներ և կոչվում են անկախ հոլով, որովհետև ցույց են տալիս կամ մի առարկա առանց հարաբերության, խոսքի կապակցությունից դուրս, կամ եթե որոշ հարաբերություն են ցույց տալիս... այդ հարաբերությունը լինում է ներուսականությամբ և ոչ կախումով: Մյուս ՀՈԼՈՎՆԵՐԸ՝ հայցական, սեռական, տրական, բացառական և ներգոյական՝ կոչվում են կախման հոլով (ընդգծումն իմն է—Ա. Մ.), որովհետև ցույց են տալիս մի առարկա, որ կախման հարաբերության մեջ է մի ուրիշ առարկային կատմամբ»³¹:

Բայց այստեղ իսկ հարկ է նշել, որ ըստ նշանակության հոլովները որոշելու կամ զանազանելու դրույթը Մ. Աբեղյանը ոչ թե սկզբից ևեթ, այլ նախորդ՝ «Աշխարհաբարի քերականություն» (1906 թ.), «Աշխարհաբարի հոլովները» (1908 թ.), «Գրաբարի համառոտ քերականություն» (1907 թ.), «Տարրական քերականություն» (1907—1908 թթ.՝ 1-ին և 2-րդ տպագր.) և «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (1909 թ.) աշխատություններից հետո է հայտնել, անշուշտ, հայցական հոլովի մերժման մալխասյանական քննադատության և հինգ հոլովի տեսակետի՝ ուսուցչության (հատկապես՝ Թիֆլիսի) շրջանում հարուցած դժգոհության ու տրտույնների ազդեցությամբ:

Նկատելի է նաև, որ հոլովը որոշելով անվան և՛ ըստ փոփոխված՝ արտաքին ձևի, և՛ ըստ նշանակության՝ Մ. Աբեղյանը միաժամանակ իրարից զատ առնված այդ երկու հիմունքները մերձեցնելու եզրեր է որոնել և իր հետագա լեզվաբանական-քերականական աշխատություններում ոչ միայն հայցականն ու սեռականն է առանձին, ինքնուրույն հոլովներ, այլև նրանց ուսուցումն է խիստ կարևոր ու անհրաժեշտ համարել:

Սկզբնապես հակված լինելով, որ նույնիսկ գրաբարում ձևով իրար նման սեռականն ու տրականը մի հոլով են, Մ. Աբեղյանը եթե «Գրաբարի համառոտ քերականություն» 1907 թ. հրատարակության մեջ գտնում էր, որ գրաբարում ևս «Հոլովները հինգ են՝ ուղղական, հայցական, տրական, ու և սեռական է (ընդգծումն իմն է—Ա. Մ.), բացառական և գործիական»³², ապա նրա 2-րդ, վերամշակված հրատարակության մեջ (1936 թ.), Ա. Այտընյանի, Ա. Մեյիսի պես, այն տեսակետն է դաժանում, որ գրաբարում հոլովները ոչ թե վեց, այլ անգամ յոթն են՝ «Ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական»³³: Այդպես և՛ «Տարրական քերականություն» 3-րդ՝ վերամշակված հրատարակության մեջ նա ոչ միայն հայցականն ու սեռականը արդեն իբրև առանձին հոլովներ է ներկայացնում, ասելով, օրինակ, «Բացի (այս) հինգ հոլովից կան նաև կոչական, հայցական և սեռական հոլովներ, որոնք հայերենում չունին առանձին ձև: Կոչականը նման

²⁹ Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տեսություն, էջ 399:

³⁰ Նույն տեղում, էջ 399:

³¹ Նույն տեղում:

³² Մ. Աբեղյան. Գրաբարի համառոտ քերականություն. Վաղարշապատ, 1907, էջ 76:

³³ Մ. Աբեղյան. Երկեր, հատ. 2, էջ 756:

է ուղղականին, սեռականը՝ տրականին, իսկ հայցականն՝ ուղղականին, որոշ դեպքերում նաև տրականին»⁸⁴, այլև առավել մեծ կարևորություն է տալիս նրանց ուսուցմանը՝ հիշեցում անելով, օրինակ, այն մասին, թե «Երրորդի (իմա՝ 3-րդ հրատարակության—Ա. Մ.) մեջ ուսաց լեզվի վարժապետների ցանկության համեմատ՝ առաջ է դրված հայցական հոլովի ուսումը»⁸⁵:

Իբրև առանձնակի, ինքնուրույն ու անկախ հոլովներ, հայցականն ու սեռականը, սակայն, իրենց ամբողջական ու փայլուն լուսաբանությունն են գտել «Աշխարհաբարի շարահյուսություն» մեծարժեք աշխատության մեջ:

Այդտեղ իսկ նշելով, որ «Հոլովական ձևերով արտահայտվում են այն զանազան հարաբերությունները, որոնցով գոյականը խոսքի (իմա՝ նախադասության—Ա. Մ.) մեջ իբրև լրացում կապակցվում է ուրիշ բառերի հետ»⁸⁶, Մ. Արևելյանը՝ 1) Ուղղական հոլովաձևի (=բառի ուղիղ ձևի) երեք տեսակ է զանազանում՝ իրարից՝ ա) բուն կամ անվանական ուղղական, բ) կոչական ուղղական և գ) հայցական ուղղական, և ցույց տալիս, թե դրանցից յուրաքանչյուրը ի՞նչ նշանակություն է արտահայտում և ի՞նչ կիրառություններով է գործածվում նախադասության մեջ: Մի կողմ թողնելով «կոչական ուղղականը», որ, իբրև առանձին հոլով, հայ քերականները վաղուց մերժել ու հանել էին հայերենի հոլովական հարացուցալին կազմից, պետք է ասել, որ նման տարաբաժանմամբ Մ. Արևելյանը որոշակիորեն սահմանազատում է ուղղականն ու հայցականը իրարից՝ ակնհերե դարձնելով մի կողմից նրանց ձևական նմանությունը, մյուս կողմից՝ նշանակության և կիրառության անհամատեղելությունը:

2) Սեռականը տրական հոլովի տարատեսակ համարելով և ասելով, թե «աշխարհաբարում սեռական և տրական հոլովները բոլորովին նույն ձևը և մեծ մասամբ նույն նշանակությունն ունին և միայն կիրառությամբ են զանազանվում», նա սեռականը ո՛չ թե տրականի մեջ է առնում և «տրական հոլովի» տակ⁸⁷, այլ ներկայացնում է «հայցականից» հետո և նրանից առաջ՝ զուտ իրեն հատուկ իմաստներով⁸⁸:

Սրանք փաստեր են, որոնք շատ պարզ ցույց են տալիս, որ ըստ ձևի ընդունելով հինգ հոլով և հայցականը ուղղականի կամ տրականի, սեռականն էլ տրականի տարատեսակ համարելով՝ Մ. Արևելյանը, այնուամենայնիվ, չի ժխտել նրանց, իբրև ուղղականից ու տրականից տարբերվող հոլովների, ինքնությունը և ոչ միայն չի բացառել սեռական կամ սեռական հոլով, հայցական կամ հայցական հոլով անվանումների գործածությունը, այլև ընդունելի ու անհրաժեշտ է համարել դրանք՝ ասելով, օրինակ. «Թեպետ և մեր աշխարհաբարն իսկապես չունի կոչական, հայցական և սեռական հոլովներ, այսինքն այդ հոլովներն այլևս ոչ թե բառի առանձին ձևերով են որոշվում, այլ միայն դրությամբ կամ կիրառությամբ, բայց և այնպես կոչական, հայցական և սեռական անունները իբրև շարահյուսական հարաբերությունների արտահայտիչներ ոչ միայն ընդունելի, այլև նույնիսկ անհրաժեշտ են, ի նկատի ունենալով, որ մեր քերականության ուսումը լինում է միշտ զուգընթաց գրաբարի և օտար լեզուների քերականության ուսման հետ: Այս պատճառով և ներքևվում այդ հոլովներն առանձին առանձին են վերցված»⁸⁹:

Բայց այստեղից էլ պարզ երևում է, որ իրարից զատ, ըստ ձևի և ըստ նշանակության հոլովները որոշելու երկու տարբեր հիմունքները, որոնցով առաջնորդվել է Մ. Արևելյանը, ոչ միայն չեն միահյուսվել կամ համատեղվել, այլև առանձին դեպքերում հիմք են ծառայել որոշ հակասական մտքերի ու

84 Մ. Արևելյան. Տարական քերականություն. Թիֆլիս, 1910, էջ 40:

85 Նույն տեղում, էջ 25:

86 Մ. Արևելյան. Հայոց լեզվի տեսություն, էջ 399:

87 Տե՛ս Մ. Արևելյան. Հայոց լեզվի տեսություն, էջ 428—448:

88 Տե՛ս նույն տեղում, էջ 419—427:

89 Նույն տեղում, էջ 399:

բացատրությունների համար: Օրինակ՝ իսկական բարդությունները նկարագրելիս եթե նա գտնում է, որ՝ «Բարդության առաջին մասի համար առնվում է եզակի ուղղական հոլովը, օրինակ՝ մարդ-ա-սեր»⁴⁰, կամ՝ «Բարդության առաջին անդամը... է՝ եզակի ուղղական հոլովը»⁴¹, ապա վերջադաս բայարմատով կամ բայարևով կազմված բարդությունները քննելիս ուղղակի ասում է. «Իսկ երբ առաջին մասը գոյական է, ստանում է զանազան հոլովների և նախադրությունների ու հետադրությունների նշանակություն»:

Ուղղականի նշանակությամբ, օրինակ՝ սրտամեռ—սիրտը մեռած, տիրամեռ, տնաքանդ—տունը քանդված (տնաքանդ եղանք)...

Հայցականի և զանազան նախդիրների նշանակությամբ, օրինակ՝ մարդասեր—մարդ սիրող, ձկնորս, մատենագիր, բարեգործ և այլն...

Սեռականի նշանակությամբ, սակավաթիվ բառեր, օրինակ՝ ջրատար, գետատար—ջրի տարած, գալլակներ—գալլի կներած:

Տրականի նշանակությամբ, օրինակ՝ գրավարժ—գրի վարժված, խավարասովոր, երկնահույ, գետնամած—գետնին կպած...»⁴²:

Որոշ հակասական մտքերից ու մեկնություններից զերծ չէ նաև կապերի քննությանը վերաբերող բաժինը. խոսելով հայցականով խնդիր առնող կապերի (նախադրությունների) մասին՝ Մ. Արեղյանը հայցականը երբեմն նաև հենց առանձին հոլով է համարում՝ ասելով, օրինակ. «Ի, ց, առ, դեպի, մինչև նախադրությունները նշանակում են շարժման ուղղություն դեպի մի առարկա կամ տեղ և դրվում են հայցականի կամ տրականի հետ, որոնք շարժման հանգույցը ցույց տվող հոլովներ են (ընդգծումն իմն է—Ա. Մ.)»⁴³, «Առանց նախադրությունը տրական հոլովի, երբեմն ժողովրդական ձևով նաև հայցական հոլովի հետ (ընդգծումն իմն է—Ա. Մ.), ցույց է տալիս հեռացած, բաժանված լինելը, կամ շինելը, պակասություն»⁴⁴, «Քան, ավելի քան (ծագած գրաբարի քան+ըզ ձևից), զործ է ածվում ժողովրդական լեզվի մեջ հայցական հոլովի հետ (ընդգծումն իմն է—Ա. Մ.), անձնական դերանունների տրականի հետ՝ քանց ինձ, քանց քեզ»⁴⁵, և այլն:

Այդպես և Մ. Արեղյանը անձնական դերանունների՝ տրականից տարբերվող սեռականի ձևերը սեռական կամ ստացական է անվանում և կապի սեռականով խնդրառությունը (ի դեպ, ոչ միայն ժամանակակից, այլև հայոց լեզվում ընդհանրապես կապերի մեծագույն մասը սեռականով է խնդիր առնում) չբացատրելով՝ ասում. «Անիսկական կապերը՝ պես, չափ, տեղ, հետ, դեմ, մոտ, վրա՝ իրենց խնդիրը, երբ առաջին կամ երկրորդ դեմքի դերանուն է, առնում են տրական հոլովով՝ ինձ պես, քեզ հետ. երկրորդ դեմքի անձնական ու ցուցական դերանունների հետ սակայն ասվում են դեռ սեռականով կամ ստացականով՝ սրա պես, նրա հետ, իր վրա կամ իրեն վրա: ...Պատահում են հաճախ նաև առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների սեռականի կամ ստացականի գործածություններ՝ մեր պես, ձեր վրա, քեզ տեղ»⁴⁶, «Համար հետադրությունը դրվում է տրականի հետ՝ ինձ համար, քեզ համար, բայց... երրորդ դեմքի անձնական և ցուցական դերանունների հետ ասվում է սեռականով կամ ստացականով՝ սրա համար, դրա համար, նրա համար, իր համար կամ իրեն համար (ժողովրդ. ձևով՝ իրա համար)»⁴⁷ և այլն:

Այսպիսով՝ դուրս է գալիս, որ հիշյալ կապերի համար բնորոշը ոչ թե սեռականով, այլ տրականով խնդրառությունն է: Բայց դա, իհարկե, այդպես

40 Նույն տեղում, էջ 189:

41 Նույն տեղում, էջ 195:

42 Նույն տեղում, էջ 205—206:

43 Նույն տեղում, էջ 474:

44 Նույն տեղում, էջ 481:

45 Նույն տեղում, էջ 483:

46 Նույն տեղում, էջ 484:

47 Նույն տեղում, էջ 479:

չէ. ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում ժամանակակից հայոց լեզվում պես, չափ, տեղ, հեռ, դեմ, մոտ, վրա, համար, կապերն ընդհանուր առմամբ խնդիր են առնում սեռական հոլովով, որ, սակայն, ժողովրդախոսակցական լեզվի, հատկապես՝ Արարատյան բարբառի ազդեցությամբ որոշ անձնական դերանունների դեպքում փոխարինվել է տրականով և սովորական դարձել գրական լեզվում. հմմտ. իմ պես—ինձ պես, իմ վրա—ինձ վրա, քո հեռ—ինձ հեռ, մեր համար—մեզ համար և այլն⁴⁸:

Առաջ գնալով՝ նշենք, որ ինչպես չի արդարացվում անձնական ու ցուցական որոշ դերանունների սեռականի ձևերը և՛ սեռական, և՛ ստացական (դերանուն թե՛ ածական) համարելը, այնպես էլ չի արդարացվում և ըստ էության հակասական է դառնում, երբ սեռականն ու տրականը միացվում և «սեռական-տրական» անունով մի հոլով են կոչվում⁴⁹:

Այս ամենն էլ վկայում ու ցույց է տալիս, որ Մ. Արեղյանի հոլովական տեսությունը իրոք բացարձակապես անթերի չէ և զերծ մերժելի ու վիճահարույց մեկնություններից, որ հայցականի ու սեռականի մերժումը հիմնավորապես չի հաստատվում արևելահայ աշխարհաբարի լեզվական փաստերով, և հինգ հոլովի տեսակետը ճշտորեն չի արտացոլում նրա հոլովական համակարգը:

Առաջնորդվելով հոլովի որոշման ոչ թե մեկ հիմնական ու միասնական, այլ երկու տարանջատ հիմունքով և ըստ ձևի կամ ձևականորեն ընդունելով հինգ, իսկ ըստ նշանակության՝ անգամ ութ հոլով, Մ. Արեղյանը այդպիսով երկատում էր այդ համակարգը և հոլովները տարբեր կերպ ներկայացնում լեզվի ձևաբանության ու շարահյուսության մեջ:

Հայտնի է, սակայն, որ չկա լեզու, որ երկու դեպքում էլ հոլովները քանակով նույնը չլինեն և չհամապատասխանեն իրար: Եվ հետևաբար՝ հոլովը անվան զուտ արտաքին ձևով որոշելու հիմունքը խոտելի է և անընդունելի:

Գտնելով ու բազմիցս նշելով հանդերձ, որ «Հոլովական ձևերով արտահայտվում են այն զանազան հարաբերությունները, որոնցով գոյականը խոսքի մեջ իբրև լրացում կապակցվում է ուրիշ բառերի հետ»⁵⁰, «Գոյական ձևերը ցույց են տալիս զանազան լրացական հարաբերություններ, որ գոյականը խոսքի մեջ ունի բայի, ածականի կամ մի ուրիշ գոյականի նկատմամբ իբրև լրացում»⁵¹, «Հոլովական ձևերը զանազան հարաբերություններ են ցույց տալիս»⁵², Մ. Արեղյանը տարբեր հարաբերություններ արտահայտող ձևով նման հոլովները նույնացնում է իրար, որովհետև դրանք անվան նույն քերականական կամ բառային ձևերն է համարում:

Բայց դա ևս իրապես այդպես չէ. ուղղականն ու ուղղականաձև հայցականը (հմմտ. «Անտառը գեղեցիկ է» և «Ես սիրում եմ գեղեցիկ անտառը»), տրականն ու տրականաձև հայցականը (հմմտ. «Նա հանդիպեց իր հօրը» և «Նա չի մոռանում իբր հօրը»), սեռականն ու սեռականաձև տրականը (հմմտ. «Ծառի տերևը կանաչ է» և «Տիգրանը մոտեցավ մի ծառի») տարբեր կամ զանազան հարաբերություններ են արտահայտում և ըստ այդմ էլ ոչ թե նույն, այլ տարբեր հոլովական ձևեր են և ամենայն իրավամբ հանդիսանում են քերականական համանուններ, որոնց մասին, սակայն, Մ. Արեղյանի ժամանակ լեզվաբանական որոշակի տեսություն չէր ստեղծվել: Եվ ամենևին էլ պատահական չպետք է համարել, որ քննելով հայոց լեզվի համանունները՝

48 Այդ մասին տե՛ս մեր Արդի հայերենի կապերը. Երևան, 1955, էջ 47—51:

49 Այդ մասին տե՛ս Մ. Արեղյան. Հայոց լեզվի տեսություն, էջ 388: Երկեր, հատ. Ը, էջ 565 և այլն:

50 Մ. Արեղյան. Հայոց լեզվի տեսություն, էջ 399:

51 Նույն տեղում, էջ 334:

52 Մ. Արեղյան. Երկեր, հատ. Ը, էջ 559:

նա չի անդրադարձել քերականական համանունությունը և այդ մասին ոչինչ չի ասել⁵³:

Դրանով, անշուշտ, հենց դրանով պետք է բացատրել Մ. Աբեղյանի հոլովական տեսության նաև այն թերությունը, որ նա, թեև ուղղականն՝ անկախ ու ուղիղ, մյուս հոլովները կախյալ ու թեք հոլովներ է համարում, բայց ոչ միայն գոյականների, այլև սեռականով և տրականով տարբերվող դերանունների փոփոխված ձևերն է հինգ հոլովի (ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական) հարացույցով ներկայացնում:

Այդպիսով էլ, պարզ է, անտեսվում ու ժխտվում են այն ընդհանրությունները, որ դրսևորում են միմյանց նկատմամբ ձևով նման՝ ուղղական, սեռական, տրական և հայցական հոլովները գրաբարում, միջին հայերենում, բազմաբանակ հայ բարբառներում և արևմտահայ աշխարհագրում կամ արևմտահայ գրական լեզվում:

Այդ հոլովները, ձևական տարբերություններից անկախ, բոլոր դեպքերում միատեսակ հարաբերություններ են արտահայտում, չեն հակադրվում և համարժեք, հավասարազոր հոլովներ են՝ իրենց ճանաչողական արժեքով ու նշանակությամբ: Այսպանից հետևում է, որ հոլովը ոչ թե միասնաբար՝ ձևով ու բովանդակությամբ, այլ բովանդակությունից, նշանակությունից, արտահայտած հարաբերությունից վերառած, անվան զուտ արտաքին՝ փոփոխված ձևով որոշելու հիմունքը խոտելի լինելով՝ չէր կարող ինչ-որ չափով բացասական դրոշմ չթողնել Մ. Աբեղյանի հոլովական տեսության վրա և շատվե-րել այն:

Բայց մյուս կողմից էլ պետք է ասել, որ այն դրա համար մի տեսակ արտաքին շղարշ է ծառայել, և արևելահայ աշխարհագրի հոլովական համակարգը պատկերելիս Մ. Աբեղյանը հիմնականում առաջնորդվել է հոլովներն ըստ նշանակության, ըստ արտահայտած հարաբերության որոշելու հիմունքով և, օրինակ, ի հարկեն հիշեցում արել, որ «Տալրական քերականության» 1910 թ.՝ «Երրորդ հրատարակության վերջում ավելացրած է և մի «Չորրորդ հատված. Շարահյուսություն» որի մեջ ավելի մանրամասն բացատրված է «Հոլովների նշանակությունն ու պաշտոնը» (եր. 85—88)՝ ուղղական, կոչական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական, ներգոյական: Դրանով կազմված էր ամբողջական ֆեռականություն (ընդգծումն իմն է—Ա. Մ.)»⁵⁴, իսկ կամ՝ «Օբյեկտիվ իրականությունն այն է, որ Աբեղյանն սկսած 1906 թվից իր քերականությունների և ուսումնասիրությունների մեջ հոլովը չի համարել «սոսկ ձև», այսինքն՝ սոսկ հնչյուն առանց նշանակության, որ է՝ մի անհեթեթություն, և որ նա ձևաբանության մեջ կարևոր տեղ է տվել հոլովների նշանակությանը (ընդգծումն իմն է—Ա. Մ.), որ նա իմ, քո, իր և այլն դրել է անձնական դերանունների միջև իբրև սեռական»⁵⁵ և այլն:

Այսպիսով՝ Մ. Աբեղյանի հոլովական տեսությունը բնորոշվում ու արժեքավորվում է ոչ թե անվան արտաքին՝ փոփոխված ձևին համապատասխան ընդունված հինգ հոլովով, այլ այն բանով, որ իր քերականական աշխատություններում նա լեզվական հարուստ փաստերի հիման վրա ըստ նշանակության իրոք քննության է առել արևելահայ աշխարհագրի կամ արևելահայ գրական լեզվի հոլովները՝ խոր նրբազգացողությամբ և տվել նրանց իրական պատկերը:

Դա մենք շատ ավելի վաղ արտահայտված ենք տեսնում «Աշխարհագրի շարահյուսության» մեջ, որտեղ և ոչ միայն ձևավորմամբ պարզ, հեշտորեն տարրորոշվող կախյալ հոլովների՝ բացառականի (1. զատական, 2. ծագման և նյութի, 3. մասնական, 4. ներգործող խնդրի, 5. պատճառի, 6. բաղդատական, 7. սահմանափակման, 8. պատմական, 9. տեղի, 10. ժամանակի),

⁵³ Այդ մասին տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 153—154:

⁵⁴ Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Ը, էջ 565:

⁵⁵ Նույն տեղում, էջ 565:

գործիականի (1. միջոցի, 2. հիմունքի, 3. ներգործող խնդրի, 4. սահմանափակման, 5. պարառական, 6. անդի, 7. ժամանակի, 8. ձևի և միասնության, 9. չափ ու քանակի և դնի), ներգոյականի (1. տեղի, 2. ժամանակի), այլև մյուս՝ ձևականորեն հեշտորեն շտարորոշվող կախյալ հոլովների՝ հայցականի, սեռականի, տրականի բազմազան իմաստներն են բազմազան օրինակներով ցուցադրվում և լուսաբանվում:

Այսպես՝ հայցականի համար, ուղղականից անկախ, Աբեղյանը վեց իմաստ է նշում և գտնում, որ այն լինում է՝ 1. տեղի (օրինակ՝ «Ծառն ախրս ուղարկում, նա ախրոն է մանում»), 2. ժամանակի (օրինակ՝ «Բարով եկող տարի հասնենք»), 3. չափ ու քանակի (օր.՝ «Նա մի քիչ մոտեցավ ինձ»), 4. նպատակի (օր.՝ «Նա գնաց որս»), 5. կրող խնդրի (օր.՝ «Նա մի աղջիկ ունի միայն, էլ ուրիշ զավակ չունի»), 6. ներգոյական (օր.՝ «Նա Երևան է բնակվում»): Սեռականի համար, տրականից անկախ, տասնմեկ իմաստ է նշում և գտնում, որ այն լինում է՝ 1. ստացական (օր.՝ «Տիգրանի գիրքը. ձիու գլուխը»), 2. ծագման (օր.՝ «Արեգակի ճառագայթները. Սուրբանի երկերը»), 3. ենթակայական (օր.՝ «Շան հաշին էլ մի փեշակ է»), 4. առարկայական (օր.՝ «Փողի գտնելը հեշտ չի»), 5. մասնական (օր.՝ «Ի՞նչ արժե այս գինու շիշը»), 6. կյուրի (օր.՝ «Ժողովների փունջ. անպտուղ ծառերի անտառ»), 7. պարունակության (օր.՝ «Գինու կարաս. կրծքի ժամ»), 8. տեղի և ժամանակի (օր.՝ «Արձակի մեջիդ գոտին», «Սկսեցին գարնան աշխատանքները»), 9. գնի և արժեքի (օր.՝ «Այստեղ հինգ ռուբլու ապրանք կա»), 10. որական (օր.՝ «Նա գործի մարդ չէ, այլ խոսքի մարդ»), 11. քանակայություն (օր.՝ «Էջմիածնի վանք. հայի աղջիկ»):

Տրականի համար, սեռականից և հայցականից անկախ, հինգ իմաստ է նշում և գտնում, որ այն լինում է՝ 1. մատուցման (օր.՝ «Աղվեսի դուռը խաղողին չհասավ, ասաց՝ խակ է»), 2. շահի (օր.՝ «Ուրիշին փոր փորողն ինքը կընկնի մեջը»), 3. նպատակի (օր.՝ «Գնացին Երևան ատուտուրի»), 4. կրող խնդրի (օր.՝ «Խեղճ մարդուն աստված չի ստեղծել»), 5. ներգոյական (օր.՝ «Էջը ի՞նչ գիտի, թե մեջքին ինչ կա», «Տաշած քարը գետնին չի մնալ», «Այս եղանակին մի՞թե կարելի է տնից դուրս գալ»)՝⁶⁸:

Բացի նրանից, որ անձի առման հայցականը Մ. Աբեղյանը ստականի մեջ է առել և հայցական տրական անվանել այն պատճառաբանությամբ, թե ժամանակի ընթացքում «տրականն անցել է հայցականի տեղ»⁶⁹, պետք է ասել, որ մնացած բոլոր դեպքերում նա իրարից զատ և խստագույն ճշտությամբ է ներկայացրել նաև հայցական, սեռական, տրական հոլովների իմաստները՝ իրենց տարատեսակ առումներով, առանձնահատկություններով ու դրսևորումներով:

Այսպիսով՝ Մ. Աբեղյանի հոլովական տեսությունը ստանում է շատ ավելի հարուստ բովանդակություն և լավագույնս արտացոլելով արևելահայ աշխարհաբարի հոլովական համակարգը՝ ցույց է տալիս, որ այն պատկերացնել կամ գնահատել հինգ հոլովով, նշանակում է ծառերի ետևում անտառը շտեմել, նշանակում է ոչ միայն խիստ պարզունակեցնել, այլև արժեզրկել ու նսեմացնել աբեղյանական հոլովական տեսությունը:

Գալով այն հարցին, թե ինչ գնահատության է արժանացել այդ տեսությունը Մ. Աբեղյանի կենդանության օրոք և հետո, պետք է ասել, որ դա ևս կարևոր հարց է և մի առանձին քննություն է պահանջում: Ուստի բավարարվելով այսքանով՝ այստեղ հարկ եմք համարում միայն նշել, որ այն բանավեճը, որ մղվել է անցյալում՝ 1908—1909, 1936 թթ. և «վերականգնացվել» 1965 թ.՝ ծավալվելով այդ ժամանակից մինչև այսօր, իր հերթին վկայում է, որ Մ. Աբեղյանը ոչ թե միագծորեն պարզ ու պարզունակ, այլ յուրատեսակ

⁶⁸ Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տեսություն, էջ 411—469.

⁶⁹ Նույն տեղում, էջ 443:

բարդ հոլովական տեսություն է ստեղծել, որի ճիշտ բնութագրման համար նրա (ուսարանությունը նույնպես որոշակի կարևորություն է ներկայացնում:

ПАДЕЖНАЯ ТЕОРИЯ МАНУКА АБЕГЯНА

Доктор филолог. наук А. С. МАРКАРЯН

Р е з ю м е

В статье рассматривается теория выдающегося ученого армениста М. Абеяна о падежах ашхарабара или новоармянского литературного языка. Падеж как грамматическая категория имени, выражающая разные отношения между предметами, признаками или процессами действительности, занимает важное место в языковедческих и грамматических трудах М. Абеяна. Абеян исследовал и освещал падежи: а) *лишь по их внешним формам* и находил, что родительный и винительный перестали быть самостоятельными падежами в ашхарабаре и в нем существуют только пять падежей — именительный, дательный, отложительный, творительный, местный, б) *лишь по их значениям* и находил, что родительный и винительный — самостоятельные падежи, и в ашхарабаре существуют не семь, а даже восемь падежей — именительный, звательный, винительный, родительный, дательный, отложительный, творительный, местный.